ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

01.06.2015թ.
249-ի 5

“ՀայՓոստ” ՓԲԸ-ի գլխավոր
գործադիր տնօրենի պաշտոնակատար
պարոն Հայկ Ավագյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ավագյան,

2014թ.-ի նոյեմբերի 5-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն (ԻԱԿ) պատվիրված նամակով գրություն է ուղարկել Նոյեմբերյանի քաղաքապետարանին: Այժմ անհրաժեշտ է ճշտել, թե Նոյեմբերյանի քաղաքապետարանը երբ է ստացել ԻԱԿ-ի ուղարկած նամակը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե Նոյեմբերյանի քաղաքապետարանը ե՞րբ է ստացել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ուղարկած նամակը եւ տրամադրել Նոյեմբերյանի քաղաքապետարանի կողմից նամակը ստանալը հավաստող փաստաթղթի (“ՀայՓոստ” ՓԲԸ-ի գրանցամատյանի՝ նամակը ստացողի ստորագրությամբ համապատասխան այունյակի) պատճենը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Նոյեմբերյանի քաղաքապետարանին նամակն ուղարկվել է ցուցակով՝ ի թիվս այլ նամակների: Ուստի կից ներկայացնում եմ համապատասխան ցուցակի եւ փոստային անդորրագրի պատճենները:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան